



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3106

О. Щрекъ бр

Принрт.

82

С-98

рѣкъ 1902 р

ՆՈՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԺԳ.

Օ. ՇՐԱՅԵՐ

Պ Պ Ս Պ Պ Գ

Թարգմ. Գիշես Ա. Քոչ. Աղ. Ան. Եղբայր



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Տ. Մ. Թօոդորինսկանցի

1902

89
7-98

ԳԻՒՏ Ա. ՔԱՅ. ԱՂԱՆԵԱՆՑԻ
ա. աշխատութիւնները

- | | | | | | |
|-----|---|-------------------|---|-------|-------|
| 1. | Աղօթատեր դ. տպ. 1888 | . | . | . | — 10 |
| 2. | Կրօնի դասագիրք ա. տ. 1889 (սպառուած) | . | . | . | — 15 |
| 3. | » | բ. տ. գ. տպ. 1891 | . | . | — 25 |
| 4. | » | գ. տ. գ. տպ. | . | . | — 25 |
| 5. | Տօմար և տօնացոյ Հայաստ. եկ. բ. տպ. 1891 | . | . | . | — 50 |
| 6. | Կարնու գալթը. պատմուական տեսութիւն, 1891 | . | . | . | — 10 |
| 7. | Դիւան Հայոց պատմութեան, զիրք Ա. Բ. 1780—
1831 Սահակ-Մուրովեան մրցանակին արժա-
նացած 1893 | . | . | . | — 2 — |
| 8. | Դիւան Հայոց պատմ. զիրք Գ. Սիմէնն կաթողի-
ոսի իշխառակարանը, եկենագլութեամբ, լա-
ւելուածներով ու Խանօթութիւններով, Ս. Հակ-
Մեսրոպեան մրցանակին արժանացած. 1894 | . | . | — 7 — | |
| 9. | Դի. ան Հայոց պատմ. զիրք Գ. Ղուկաս կաթող.
1780—1800 (լուսունկար պատճերով և վիմատիպ
կոնդակով) 1899 | . | . | . | — 4 — |
| 10. | Կարգ աստուածագալութեան Հայաստանեաց
ա. եկեղեցայ դ. տպ. 35 նկարով, 1901 | . | . | . | — 50 |
| 11. | Հընկը-Նորից, ճնախօս. ովկոր. պրակ Ա. 1900. | . | . | . | — 30 |
| 12. | Պատիք օրացոյց 1902 ամի, Ժամանակ. Ժ. տարի | . | . | . | — 50 |
| 13. | Նամակագիրք, 1902 | . | . | . | — 40 |
| 14. | Ծոցի օրացոյց 1902 ամի և լաւելուած. Առող-
ջապահական խոհարարութիւն | . | . | . | — 45 |

Ա. Թարգմանութիւններ

- | | | | |
|-----|--|---|------|
| 15. | Հաւատարմանթիւնք ամեն արդելքների յաղթում
է Ֆ. Հոփմանի 1877 . | . | — 40 |
| 16. | Խաւարից գէպի լուս. Ֆ. Հոփմ 1878. (սպառ.) . | — | 40 |
| 17. | Գօն Քիջու լամանշեցի, Մ. Ալբվ. 1878 (սպառ.) . | — | 70 |
| 18. | Գէպր Խոլյամոն, 1879 (սպառուած) | . | — 60 |
| 19. | Երբարի սոկի, առակ 1.ակիդէի բ. տպ. 1893 . | . | — 10 |
| 20. | Թօրինդոն (հրատ. Թիֆլ. տպագր. ընկերութ.) . | — | 60 |
| 21. | Զէսոէրոսօնի ժառանգը, պատկ' բազարի, 1882. — | — | 50 |
| 22. | Ակուշ. տ. Սիմոէվալի. 1885 (սպառուած). . | — | 20 |
| 23. | Եան Լինսոն Սմօլեար. և, Եանչուկի, 1885 (սպ.) . | — | 5 |
| 24. | Արծուի մատածունքը, պրօֆ. Մ. Բողդան. 1892. — | — | 5 |
| 25. | Գիւլի սուրբը, Սվետառօսու Ձէխի, 1892 . | . | — 10 |
| 26. | Կեանքի գպայոցը, Դիկունսի, 1892 . | . | — 1 |
| 27. | Դէպի Աթէնք, Հ. Մենկիւի 1896 . | . | — 10 |
| 28. | Մի կոտր հաց, Պոտապէնկօի 1896 . | . | — 15 |
| 29. | Որսորդ, Օ. Երաւնէրի | . | — 10 |
| 30. | Մատուիք աւերակներում, Օ. Երաւնէրի . | . | — 5 |
| 31. | Կարա | . | — 5 |

ՆՈՐ ՄԱՍԻՆԱԴԱՐԱՆ

૭૭.

Օ. ՀՐԱՅԵՐ



Յարգի, ԳիլՏ Ա., ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

ΦΗΦΙΚΟΥ

Տպարան Տ. Մ. Ռօտինեանցի

1902

15.07.2013

Дозволено цензурою, Тифлисъ, 2-го Октября
1901 г.

ՕՐԱԿԱՐԳ

Հովտում ապրում էր մի որսորդ։ Օրը
օրին նա իւր որսն էր անում անտառում։ Մի
անգամ էլ պատահեց, որ անցաւ մի լճի
մօտից։ Նա կանգնեց եղեգնութի մէջ և սպա-
սում էր թռչնի մօտենալուն, երբ նորան
ծածկեց մի մեծ ստուեր, որի արտացոլումը
նա տեսաւ ջրի մէջ։ Նայեց երկնքին, բայց
երևոլին անհետացել էր արդէն։ Նա խիստ
ցանկացաւ արտացոլումը նորից տեսնել ջրի
մէջ, սկսեց հսկել և ամբողջ օրն սպասել.
բայց գիշերը վրայ հասաւ և ոչինչ չտեսաւ։
Եւ դատարկ պարկով յետ դարձաւ նա տուն,
տիրած ու լոփի։ Ընկերներն սկսեցին
հարց ու փորձ անել, թէ ինչու է լուռ,
բայց նա չէր պատասխանում և միայնակ
նստած էր, իւր վշտին անձնատուր։ Ապա
եկաւ նորա բարեկամը, որին նա ասաց.
—Այսօր ես մի բան տեսալ, որ գեռ ոչ
ոք չէ տեսել երբեք, —մի մեծ սպիտակ թըռու-

չուն, որ իւր արծաթափայլ թեռերով սաւառնում էր անսահման կապուտակութեան մէջ։ Եւ ալժմ ես զգում եմ, թէ ինչպէս իմ կըքծում մի մեծ բոց ալրում է ինձ։ Սա մէթուուցիկ երևոյթ էր, արտացոլումն զրի մէջ, բայց ալժմ աշխարհումս իմ միակ ցանկութիւնն այն է, որ իմանամ թէ այդ ինչ բան էր։

Բարեկամը ծիծաղեց. — Դա արևի ճաճանչն է եղել զրի մէջ խաղալիս, կամ նոյն իսկ քո գլխի ստուերը, — ասաց նա, — մինչեւ էգուց կմոռանաս կանցնի։

Բայց մի օրն անցաւ, երկրորդն ու երրորդն էլ, իսկ որսորդը շարունակ մեն մէնակ էր թափառում։ Նա անընդհատ որոնում էր անտառներում և դաշտերում, լճերի ու եղեգնուտների մէջ, բայց իւր որոնածը չէր գըտնում։ Նա այլ ես որս չէր անում, ինչի՞ պէտք էր այն իրեն։

«Ի՞նչ է պատահել դորան» — ասում էին ընկերները։ «Խելագարուել է» — ասաց մէկը։ «Ո՛չ, աւելի վատ, — ասաց միւսը, — ուզում է տեսնել այնպիսի մի բան, որ մեզանից երբէք ոչ ոք չէ տեսել. Հրաշք է ուզում տեսներ»։ «Գնանք, թողնենք գորան», — ասացին ամենքը։ Եւ նա մնաց միայնակ։

Մի անգամ, երբ նա զիշերուայ մթին թափառում էր, վշտագին և լալով, իւր ա-

ռաջ մի պառաւ կին տեսաւ։ Նա մահկանացուներից մեծ էր և բարձր։

— Ո՞վ ես, հարցրեց նորան որսորդը։

— Ես՝ Իմաստութիւնն եմ, — պատասխանեց պառաւը, — բայց ոմանք ինձ Գիտութիւնն անուանում, Ես իմ բոլոր կեանքն անց եմ կացրել այս հովիտներում, բայց ոչ մի մահկանացու չի տեսնում ինձ, մինչև որ վիշտ ու տանշանք չտեսնէ. միմիայն արտասուքով հեղեղած աչքեր կարող են ինձ տեսնել, և ես երեսում եմ միայն չարչարուող անձանց։

Եւ որսորդը գոչեց. Ո՞վ դու, որ այդքան ժամանակ ապրում ես այստեղ, ասա՞ ինձ, ինչ է այն ահագին հրաշալի թռչունի անունը, որ ես տեսայ երկնից մէջ սաւառնելիս։ Ինձ ուզում են հաւատացնել, որ դա միայն տեսիլ էր, որ ես տեսել եմ նոյն իսկ իմ գլխի ստուերը։

Պառաւը ժպտաց։

Նա կոչւում է — ծշմարտութիւն։ Ով մէկ անգամ տեսել է նորան, էլ երբէք հանգստութիւն չգիտէ։ Մինչև մահուան ըոպէն նորա ծարաւն ունի։

Որսորդը աղաղակեց. «Ո՛չ, իմաց տուր ինձ, ուր կարող եմ նորան տեսնել».

Բայց Իմաստութիւնն ասաց. դու դեռ բաւականաչափ չես տանջուել, — և անյալտացաւ։

Այնուհետև որսորդը հանեց իւր կրծքից երևակալութեան մաքոքը և նորա վերայ փաթըթեց իւր ցանկութեանց թելը. ամբողջ գիշեր նստեց և ցանց էր գործում: Առաջար նա ոսկէ ցանցը փռեց գետնի վերայ և ձգեց նորա մէջ գիւրահաւանութեան քանի մի հատիկներ, որ ստացել էր իւր հօրից և որ գրպանում ման էր աճում: Այս հատիկները սպիտակ էին ինչպէս բամբակ և երբ ոտը դրին նոցա լերայ՝ միջից բռուն փոշիդուրս փչեց: Եւ որսորդը նստեց կողքին և սկսեց դիտել: Ցանցի մէջ ամենից առաջ ընկաւ մի՛ ձիւնի նման սպիտակ թռչուն կապտաչեալ և հնչուն ձայնով: Եւ երգեց. «Ճըշմարտութիւնը երկնքումն է, ճշմարտութիւնը երկնքումն է»:

Երկրորդ անգամ ընկաւ մի խորհրդաւոր սե թռչուն սե գեղեցիկ աչքերով, որոնք ուշ զիդ հոգու խորքն էին թափանցում: Նա միշտ միւնոյն բանն էր երգում. «Անմահութիւն»:

Եւ որսորդը երկու թռչունն էլ վերցրեց ձեռքին, ինքն իրան տօելով. անշուշտ սոքա երկուսն էլ ճշմարտութեան հրաշալի տանից են:

Ապա ցած թռաւ գործեալ մի թռչուն — կանաչ ոսկեղին և զիլ ձայնով երգեց անանց կեանքի վարձատրութեան մասին:

Եւ որսորդն ասաց. Դու առաջինների

պէս սիրուն չես, բայց և այնպէս դու էլ լաւն ես,—և նորան էլ առաւ ձեռքը:

Դարձեալ մօտ թռան ուրիշ, պէսպիսագոյն, ուրախ, երգող թռչուններ և կտցահարեցին բոլոր հատիկներն, այնպէս որ էլ ոչինչ չմնաց: Այնուհետև որսորդը հաւաքեց իւր բոլոր թռչուններին, պինդ երկաթէ վանդակ շինեց և նոցա տեղաւորեց նորանում: Եւ ամեն կողմից ժողովուրդը երգերով ու ծափահարութեամբ սկսաւ խռովուիլ և վանդակը տեսնելով աղաղակել. «Ո՛հ բաղդատօր—որսորդ, հրաշք—մարդ: Ո՛հ ինչ սքանչելի թռչուններ են, հիանալի երգեց ր»:

Բայց ոչ ոք չհարցրեց, թէ որտեղից եկան այդ թռչունները, ինչպէս բռնեցին նոցա: Նոքա միայն երգում էին և ծափահարում նոցա շուրջը: Որսորդն էլ ուրախ էր, որովհետև տուում էր ինքն իրան. ի հարկէ սոցա մէջ պէտք է լինի նաև ճշմարտութիւնը: Ժամանակով թռչունները փետուրներից կը մերկանան, և ես կտեսնեմ նորա սպիտակափառ տեսքը:

Սակայն ժամանակն անցնում էր, ժողովուրդը շարունակ ծափահարում էր և երգում, իսկ որսորդի սիրտը օրէցօր ծանրանում էր: Նա նորից սկսեց առանձինանալ և ձանձրովիթ զգալ, և նորից զարհուրելի ծա-

ըաւն սկսեց կըծել նորա սիրտը։ Մի անդամ, երբ մենակ էր և լաց էր լինում, հանդիպեց նորան Խմաստութիւնը։ Սորան պատմեց թէ ինչ էր արել։ Եւ Խմաստութիւնը տխուր ժպտաց։

—Բազմաթիւ մարդիկ, ասաց նա, բանտարկեցին ծշմարտութիւնը ցանցում, բայց նոցանից ոչ մինը չկարողացաւ նորան գտնել։ ծշմարտութիւնը չի կարող այդ ցանցն ընկնել, չի կարող այս հովիտների օդը շնչել։ —Եւ որսորդը վշտագին աղաղակեց։

—Ուրեմն ես պէտք է այնքան նստեմ այստեղ, մինչեւ որ այս զարհուրելի բոցը կլանէ ինձ։

Եւ Խմաստութիւնն ասաց։

—Լսիր և ես քեզ կասեմ, որովհետեւ դու շատ ես տանջուել և շատ անարդուել։ ով որ արդարութեան ետևից կմանդայ, նա պէտք է ընդ միշտ թողնէ այս նախապաշարմանց հովիտը, թողնելով սորա մէջ իւր ամեն ունեցածը մինչեւ յետին ցնցոտին։ Նա մենակ պէտք է անցնի կատարեալ հրաժարման և անձնուրացութեան աշխարհը, պէտք է մնալ այնտեղ և կռուէ փորձութիւնների հետ, իսկ երբ արևի առաջին ճաճանչները կերևան, պէտք է վերկենալ և հետեւ նոցա արևի չոր անապատ երկրում։ Այստեղ

նորա առաջ կբարձրանան խիստ իրականութեան լեռները. նա պէտք է բարձրանայ նոցա վերայ։ ծշմարտութիւնը նոցա միւս կողմն է բնակում։

—Եւ կարող է ձեռք ձգել նորան։ Կարո՞ղ է իւր ձեռքում բռնել, —գոչեց որսորդը։ Խմաստութիւնը գլուխը թափ տուեց։

—Նա երբէք չի տեսնի նորան, երբէք չէ կարող ձեռքին բռնած ունենալ։ Դեռ ժամանակը չէ հասել։

Ուրեմն յոյս չկայ, տղաղակեց որսորդը։

—Լսիր, ասաց Խմաստութիւնը։ —Մի քանիսն արդէն բարձրացան այդ լեռները. աստիճան առ աստիճան բարձրացան նոքա լերկ ժայռերի վերալից և, հասնելով այ այն գտաթին, նոցա երեմն յաջողեց գտնել մի սպիտակ արծաթափայլ փետուր, որ ծշմարտութեան թելիցն էր ընկած։ Եւ կարող է պատահել, ասաց պառաւը, բարձրանալով և մարգարէաբար մատով դէպ ի երկինք ցոյց տալով, —կարող է պատահել, որ երբ մարդկարին ձեռքերը բաւական ժողովեն այդ արծաթափայլ փետուրներից և դոցանից հիւսուի պարան, իսկ պարանից ցանց, այդ ցանցը բռնէ ծշմարտութիւնը։ Միայն ծշմարտութիւնը կարող է բռնել ծշմարտութեան։

Որսորդը վերկացաւ. —Ես կգնամ, ասաց նա։

Բայց Խմաստութիւնը լետ պահեց նորանք
—Յիշիր, ասաց նա, —ով միանգամ հեռանում
է այս հովտից, էլ երբէք լետ չէ
դառնում: Թէկուզ հէնց եօթն օր եօթ գիշեր
արեան արտասուք թափէ, նա ալլ ևս
երբէք չէ կարող սահմանն անցնել: Մի անգամ
անցնելուց յետոյ՝ էլ վերադառնալ չկայ:
Այն ուղու վերայ, որ դու ես ուղում ոտք
կոխել, պարզեների մի սպասիր: Ով որ գնում
է, գնում է ազատ, ի սէր այն մեծ սիրոյ,
որ լցնում է նորա հոգին: Նորա վարձը՝ իւր
աշխատութեան մէջ է:

—Կգնամ, ասաց որսորդը, —բայց ասա
ինձ, երբ լեռներին հասնեմ, որ շաւղով գնամ:
—Ես դարերով դիզուած Գիտութեան
դուստրն եմ, —ասաց պառաւը: —Ես կարող եմ
անցնել միայն այնտեղ, ուր տրդէն շատ մար-
դիկ են անցել: Քչերը միայն հասան այդ բար-
ձրութիւններին, և իւրաքանչիւրը նոցանից
իւր համար ճանապարհ հարթեց: Այնտեղ գը-
նացողը իւր լուսով է գնում. նա այլ
ևս իմ ձախը չէ լսում: Ես կարող եմ հետեւ նորան. բայց առջեկց գնալ չեմ կարող:

Եւ Գիտութիւնն անլայտացաւ: Եւ որ-
սորդը շուռ եկաւ և գնաց իւր վանդակի մօտ
և իր ձեռքով կոտրտեց նորա երկաթէ թելերը
ու կոտրտած երկաթը սաստիկ կտրեց նորա-

ձեռքերը: Երբեմն շինելը հեշտ է լինում
քան քանդելը:

Յետոյ նա սկսեց իւր բոլոր թռչունները
մէկը միւսի ետևից հանել, և թողեց ազատ
իրանց կամքին: Բայց երբ հերթը մուգ թե-
ւաւոր խորհրդաւոր թռչունին հասաւ, եր-
կար ժամանակ բռնեց և նայում էր նորա
հրաշալի, խորը աչքերին, և թռչունը հնչեղ
և խորհրդաւոր ձայնով ճշաց. «անմահութիւն»:
Եւ նա շուտով խօսեց. «Ես սորանից չեմ կա-
րող բաժանուել: Նորան կպահեմ ինձ մօտ և
հետս կտանեմ»: Եւ պահեց նորան իւր կրծ-
քին և շորերով ծածկեց:

Բայց փոքրիկ թռչնիկը հետզհետէ ծան-
րութիւն էր դառնում նորա համար, մինչև
որ սկսեց ձնշել նորա կուրծքը ինչպէս ար-
ծիճ: Նա չկարողացաւ նորա հետ շարժուիլ,
չկարողացաւ նորա հետ հովտից դուրս դալ:
Ապա նորից հանեց թռչունը ծոցից և սկսեց
նայել նորա վերայ: «Ո՛վ սիրելի, չտեսնուած,
—ասաց նա թախծութեամբ, —միթէ չպիտի
կարողանամ քեզ հետս տանել»: Նա տրտմու-
թեամբ ձեռները ծալեց: «Թուիր, —ասաց նա
—կարող է պահել, որ ձշմարտութեան երգի-
մի նուագը այնպէս հնչէ, ինչպէս քո սիրելի-
ձայնն է, բայց ես երբէք չեմ լսի այն»:
Նա տխուր տրտում ձեռքերը կցեց, և

թուչունը իսպառ հեռացաւ նորանից։ Ապա հանեց երեակայութեան մաքոքը, յետ տուեց նորանից իւր ցանկութիւնների թելը և վայր ձգեց գետին։ դատարկ մաքոքը ծոցը դրաւ, որովհետեւ թելը շինուած էր հովտում, մինչդեռ մաքոքը անլայտ աշխարհից էր ձեռք բերուած։ Եւ նա պատրաստ էր գնալ, բայց ամբոխը արգելեց աղաղակելով։

—Յիմար, շուն, շշկուած,—գոչում էին նոքա, —ինչպէս յանդզնեցար ինքդ քո վանդակը կոտրտել, բոլոր թուչունները բաց թողնել ազատ։

Որսորդն ինչոր ասաց, բայց նորան լըսող չկար։

—ծշմարտութիւն։ Ի՞նչ բան է ճշմարտութիւնը։ Ուտելու կամ խմելու. բան է։ Ով և իցէ տեսել է նորան երեէք։ Իսկ քո թըռչունները իսկական, կենդանի էին։ Նոցա երգի ձայնը ամենքը կարող էին լսել։ Օ՛հ, լիմար, անպիտան, —աղաղակում էին նոքա, —օդը ապականում ես դու։

—Եկէք քարկոծենք սորան, գոչեցին նոքա։

—Ի՞նչ բան ունինք սորա հետ, —ասացին միւսները։ —Թո՛ղ, լիմարը ուր ուզում է գնայ։ Եւ հեռացան նորանից։ Բայց ուրիշներն ակսան ցեխ, քար ժողովել և շպրտել նորա

վերայ։ Եւ վերջապէս, երբ որսորդն արդէն բոլորովին ջարդուած էր ու վիրաւոր, նա կամաց կամաց անտառի ճանապարհը բռնեց։ Գիշերալին խաւարը իջնում էր հովտի վերայ, ստուերները խտանում էին հետզհետէ, իսկ որսորդը գնում էր ու գնում։ Վերջապէս հասաւ այն երկրի սահմանին, ուր յաւիտեան խաւար է թագաւորում։ Եւ նա անցաւ սահմանը և աղջամուղջը պատեց նորան։ Նա ըսկեց իւր առջեւը ճանապարհ որոնել, բայց այն ճիւղերը, որոնց ձեռն էր տալիս՝ թափում ու մօխրով էին ծածկում գետինը։ Բայց ամեն քալլափոխին նորա ոտները սահմում էին և նոցա տակից դուրս էր թուչում բարակ անշօշափելի փոշիի ամպ և պատում նորա երեսը։ Որսորդը նստեց քարի վերայ և ձեռքերով երեսը ծածկեց, սպասելով լոյսի ծագելուն այս խաւար և ինքնուրացութեան աշխարհում։ Նորա սիրտն էլ խաւար էր պատել։

Այնուհետեւ ճահճի աջուձախ կողմից ըսկաւ սառը մէգ բարձրանալ և ամեն կողմից շրջապատեց որսորդին։ Բարակ աննշմարելի անձրև սկսեց դալ, և աւելի խոշոր կաթիլներ սկսան հաւաքուիլ նորա մազերի և հանդերձների վերայ։ Նորա սրտի զարկը թուլացաւ, բոլոր անդամներն անզգայացան։ Եւ նա բացարաւ իւր աչքերը և հեռուում երկու պայ-

ծառ փայլող կրակ տեսաւ։ Գլուխը վեր բարձրացրեց, որպէսզի աւելի լաւ տեսնէ, և տեսաւ որ լոյսերը հետզհետէ մօտենում են իրան։ Իոքա տաքութիւն էին արձակում, լոյս էին տալիս և թռչկոտում ճիշտ այնպէս, ինչպէս կրակէ տստղեր։ Աերջապէս կանգ տռան նորա հանդէպ։ Նոցանից մէկի ճիշտ մէջտեղից գուրս էր նայում մի կնոջ դէմք, որի ալտերի վերայ նկատում էր փոսիկներ, որ ծիծառում էր և շրջապատուած էր ոսկեգոյն ծածանող մազերով։ Միւսի մէջտեղը բոցը այնպէս ուրախ շառաչում էր ու փրփրում, ինչպէս զինին բաժակում։ Եւ երկուսն էլ կաքաւում էին իւր առջեւ։

—Ո՞վքեր էք, —հարցըեց որսորդը, —որ այս միայնութեանս և գիշերային խաւարում երկում էք ինձ։

—Մենք երկուորեակներ ենք — Հեշտասիրութիւն և Տռփանք, —գոչեցին նոքա։ —Մեր հօր անունն է՝ մարդկային մարմին, մօրը՝ Սնթուժկալութիւն։ Մենք նոյնքան ծեր ենք, ինչքան բլուրներն ու գետերը, նոյնքան հին, ինչքան առաջին մարդը։ Բայց մենք չենք մեռնում։

Նոքա ծիծաղեցին։

—Ո՞հ, թող գրկեմ քեզ, —ձայնեց առաջինը, —իմ ձեռքերը քնքոյլ են ու զերմ։ Միւրտդ

սառել է, բայց ես կջերմացնեմ։ Ո՞հ, արի մօտս։ —Ես իմ ջերմ կեանքը կլցնեմ քո մէջ, —ասաց երկրորդը, —ուղեղդ անդգալացել է, անդամներդ դադալել գործելուց, բայց նոցամէջ կեռալ ուժգին և աղատ կեանքը, թող կենդանացնեմ նոցա։

—Ո՞հ, հետեւիր մեղ, —ձայն տուին նոքա, և մեղ հետ ապրիր։ Քո հոգուց աւելի աղնիս ոգիներ են եկել այս մթութեան խաւարի մէջ լոյսերով, բայց նոքա եկել են մեզ մօտ և մենք ենք ընդառաջել նոցա. այնուհետև նոքա երբէք չեն հեռացել մեզանից։ Բայց մեզանից ամենքն էլ զգացման խարէութիւններ են, միայն մենք ենք իրական, միայն մենք ենք որ կանք։ Ճշմարտութիւնը՝ ցնորք է. նախապաշարման հովիտը՝ ծաղը է. երկիրը՝ աճիւն է և ծառերը՝ փտութիւն։ Բայց մենք, —հասկա մէկ ձեռը տուր մեզ, —մենք կենդանի ենք։ Կասկածել չես կարող մէր գոյութեան մասին։ Շօշափիր, տես, ինչքան զերմութիւն ունինք։ Արի մեզ մօտ, հետներս արի։

Եւ նոքա պատեցին նորա գլխի շուրջն ու սկսեցին աւելի ու աւելի մօտենալ նորան։ Սառը կաթիլներ հոսեցին որսորդի ճակատից, պայծառ լոյսը խտղաց նորա աչքերն ու կուրացրեց, և նորա սառած արիւնը ըստ կսառ հոսել երակներում։ Եւ ասաց.

— Ինչու մեռնեմ այս սոսկալի խաւարի մէջ: Դոքա իրանց ջերմութեամբ տաքացնում են սառած արիւնս:

Բայց այս վալրկենիս նոցա առջև մի հրաշալի պատկեր անցաւ, որ չափազանց սիրելի էր, և նորա ձեռքերը թուլացան:

Նոքա շարունակ աղաղակում էին.— Արի, արի մեզ հետ:

Բայց որսորդը գլուխը բոլորովին ցած զցեց:

— Դուք ինձ կուրացնում էք, — աղաղակեց նա, — դուք տաքացնում էք իմ սիրաբ, բայց չէք կարող ինձ տալ այն, որին ես չափազանց ծարաւի եմ: Ես այստեղ կմնամ և կսպասեմ մինչեւ մահս: Թողէք ինձ:

Եւ երեսը ձեռքերով ծածկեց ու չէր ուզում այլ ևս ականջ դնել: Խոկ երբ նորից աչքերը բաց արեց, նոքա այլ ևս այնտեղ չէին, և միայն երկու առկայծող կրակներ անյալտանում էին հեռաւոր տարածութեան մէջ:

Եւ երկար, երկար գիշերը շարունակում էր իւր անստհման ընթացքը:

Ովքեր նախապաշարմանց հովակից հեռանում էին, ամենքը պարտաւոր էին գիշերակին տև աշխարհով անցնել, բայց ոմանք մնում են այնտեղ միայն մի քանի օր, շա-

տերը նեղանում են ամիսներ, տարիներ, և շատերն էլ այնտեղ և եթ մեռնում:

Եւ, վերջապէս, որսորդը նոյն խոկ հորիզոնի վերայ տեսաւ լուսոյ թոյլ փալիլոցը. վեր կացաւ և գնաց դէպի նա: Եւ երբ հասաւ, իրան գտաւ արեկի պակժառ փալիլ մէջ: Եւ նորա առաջ արձանացան լերկ փաստերի ու մերկ իրականութեան հզօր լեռները: Դոքա լուսաւորուած էին արեկի սպիտակ լուսով, և նոցա լոկ կատարներն էին ամպերում ծածկուած: Եւ որսորդը տեսաւ, որ նոյն խոկ սասրոտից բազմաթիւ շատիղներ էին բարձրանում այդ լեռների վերայ, և նորա կըծքից բարձր, ցնծալից աղաղակ դուրս պըծաւ: Նա ընտրեց նոցանից ամենադիք շաւիղը և սկսաւ բարձրանալ, և ժայռերի ու լեռների վերայ նորա հրաշափառ երգի ձանը հնչեց: Երկիւզը հեռացաւ նորանից: Նախազգուշութիւնները չափազանցրած էին: Ոչ շատ բարձր էր և ոչ էլ այնքան զառիվեր: Հարկաւոր էր մի քանի օր, մի քանի շաբաթ և էն յետին դէպում՝ մի քանի ամիս, — և նա կհասնէր գուգաթին: Եւ նա միայն այն մէկ փետուրը չէր բարձրացնի, ոչ, նա կփողովէր բոլոր ուրիշ մարդկանց մոլոված փետուրները, նոցանից ցանց կգործէր ու գերի կը վարէր ծշմարտու-

թիւնը, սորան իւր ձեռքը կառնէր, կբռնէր,
և պինդ կպահէր:

Նա ժպտաց պայծառ ուրախ արևի տակ
և բարձր ձայնով երգեց: Յաղթանակը բոլո-
րզին մօտ էր:

Սակայն, քիչ լետոյ, շատիղն սկսեց աւելի
գիք երեալ: Նորա շնչառութիւնը ծանրացաւ
և երգի ձայնը սկսեց դադարել: Աջուձախ
լեռնացան ահագին լերկ ժայռեր, նոցա վե-
րայ չկար այլեւ անդամ ոչ մամուռ, ոչ որ-
քին և չորացած գետնի ճեղքերից երեռւմ
էին անյատակ տնդունդներ: Այստեղ, այնտեղ
աչքի էին ընկնում սպիտակ ոսկրներ: Բայց
ահա շաւիղը հաղիւ նկատելի դառաւ. մնաց
միայն հետքը, վերջապէս այն ևս կորաւ: Որ-
սորդն արդէն էլ չէր երգում, նա իւր առաջ
ճանապարհն էր հարթում, մինչեւ որ հասաւ
ժայռերի մի հաւասար, միապաղադ և երկա-
րուձիգ պատի, ինչքան որ իւր աչքը կկտրէր:
—Այս պատի վերայ սանդուխ գուրս կկտրէր:
—Այս պատի վերայ սանդուխ գուրս կկտրէմ
և միանդամ որ այդ սանդուխքը բարձրանամ,
արդէն նպատակիս մօտ կլինիմ գրեթէ, —
արիաբար ասաց նա ինքն իրան: Եւ նա ձեռք
զարկեց գործի: Նա հանեց իւր երեակայու-
թեան մաքոքը և սկսեց նորանով աստիճան-
ները փորել: Բայց տեղ տեղ քարեր էին
թափթիւում, և երբեմն ամբողջ մի ամսուայ

աշխատանքը անդունդ էր թափւում, որով
հետև ստորին աստիճանները վատ քարից էին
շնուած: Բայց որսորդը չէր դադարում աշ-
խատելուց և ինքն իրան ալսպէս էր ասում.
«միանդամ որ այս սանդուխքը բարձրանամ,
արդէն նպատակիս մօտ կլինիմ գրեթէ: Մեծ
աշխատանքն աւարտած կլինիմ»:

Եւ, վերջապէս, նա հասաւ ամենավերին
գագաթը և նալեց իւր շուրջ: Հեռւում, ներ-
քե սպիտակ մշուշը թանձրացած էր նախա-
պաշարման հովտի վերալ, իսկ վերելը
բարձրանում էին նոր, ահագին լեռներ: Նո-
քա սկզբում ցածը էին թւում, այժմ անչա-
փելի բարձր էին: Գտագաթից մինչև ստորոտը
սպատել էին ժայռերի գօտիներ, հսկայական
շրջաններով գիզուած միմեանց վերալ: Եւ նո-
ցա վերայից փայլում էր լաւիտենական արել:

Որսորդը վայրենի, զարհուրելի ազաղակար-
ձակեց: Նա խոնարհեց գետին և երբ վերկացաւ,
նորա դէմքը մեռելալին դեղնութիւն ունէր:
Նա խորին լոռութիւն պահելով շարունակեց
իւր ճանապարհը: Զայն ծպտուն չէր հանում:
Հովիտներում ծնուածը դժուար է շնչում լեռնե-
րի նօսր օդը. ամեն մի շնչելը տանջանք էր
պատճառում նորան և նորա մատների ծայրե-
րից արիւն վազել սկսեց:

Երբ հասաւ ժայռերի հետեւալ պատին,

նա նորից սկսեց իւր աշխատանքը: Կատարը անվերջ էր երևում, և նա ձայն ծպտում չէր հանում: Օր ու գիշեր հնչում էր դործիքի ձայնը երկաթէ ժայռերի վերայ, որոնցում նա աստիճաններ էր դուրս փորում: Տարիները անցնում էին մէկմէկու ետևից և նա շարունակում էր իւր գործը. բայց պատը նորա առաջ բարձրանում էր դարձեալ գրեթէ մինչև երկինք: Ժամանակ առ ժամանակ նա աղօթում էր, որ այս լերկ ժայռերի վերայ գոնէ մի քիչ մաժուռ կամ որքին երևայ, որ նոց մէջ ընկերներ կարող լինի գտնել իւր համար. բայց ի զուր էր նորա աղօթքը: Եւ տարիներն անցնում էին մէկմէկու ետևից. նա հաշւում էր դոցա իւր փորած սանդուխների թուռվ: Նա այլ ևս չէր երգում, այլ ևս չէր ասում. «այս կանեմ կամ այն»—նա միայն աշխատում էր: Իսկ գիշերները, երբ խաւարը իշնում էր երկրիս վերայ, ժայռերի ճեղքերից և ալբերից, նորա վերայ դուրս էին նախում օտարօտի, վայրենի կերպարանքներ:

— Դործդ դադարացրու, մենաւըր, խոսակցիր մեզ հետ, — ձայնում էին նորա:

— Իմ փրկութիւնը աշխատութեան մէջ է. եթէ գէթ մի ըոսէ դադարացնեմ, դուք տժենքըդ վրաս կնսեք, — պատախանում էր նո:

Եւ նոքա առաւել ևս երկարացնում էին իրանց երկան պարանոցները:

— Նայիր ճեղքերի մէջ ոտքիդ առաջ, — ասում էին նոքա — ինչ է սպիտակ փալլում: Ուկրներ են դոքա: Քեզ պէս անվեհեր և քաջարի տղամարդ բարձրանում էր այս լեռը. բայց երբ վեր նայեց՝ տեսաւ, որ նորա ձգտումներն ի զուր են, որ նա ճշմարտութեան երբէք հասնել չէ կարող, երբէք չէ կարող գտնել: Ապա նա պարկեց ալստեղ, որովհետև թուլացած էր: Պարկեց, որ յաւի տեան քնչ: Նա ինքն իրան քնեցրեց: Քունը՝ հանգստութիւն է: Քնածը միայնակ չէ, նորա թէ ձեռները և թէ սիրտը ցաւ չեն զգում:

Եւ որսորդը ժպտաց, ատամները սղմեց ու ասաց.

— Միթէ ալժմ, երբ ես սրտիցս գուրս կորցեցի տմեն բան, ինչ որ ամենից թանկագին էր ինձ համար, խաւարի աշխարհում թափառեցի, փորձութեանց դէմ կռուեցի, միայնակ աշխատեցի ուր որ երբէք մարդկալին ձայն չէր լսուել, միթէ ալժմ ալստեղ պիտի պարկեմ, որպէս զի ձեր աւարը դառնամ:

Նա բարձրաձայն ծիծաղեց, և Յուստահատութեան Արձագանգներն անլատացան, որովհետև անվեհեր ուժեղ սրտի ծիծաղը մահացու հարուած է տալիս նոցա:

Սակայն, մի փոքր լետով, նոքա նորից դուրս պըծան և գիմաւորեցին նորան: Գիտես, որ մազերդ ճերմակել են, — ասացին նոքա, — որ ձեռքդ մանկան պէս դողում է: Ինքդ տեսար, որ մաքոքիդ ծայրը թթացել է, որ նա բոլորովին կոտրառել է: Եթէ որպէս ևիցէ կարողացար հետևեալ աստիճանին հասնել, — ասացին նոքա, — դա վերջին աստիճանդ կինի: Աւելի բարձր դու երբէք չես բարձրանար: Եւ նա պատասխանեց. — Ես այդ գիտեմ, — և շարունակեց իւր գործը:

Նորա ծերացած նիհար ձեռքերը վատ ու անհարթ էին քարը տաշում, նորա մատները կծկուել էին ու ոսկրացել: Այդ մարդու բոլոր ոլժն ու գեղեցկութիւնը կորել էր:

Եւ, վերջապէս, ժայռերի պատերի միջից դուրս նայեց մի ծեր, ցամաքած և կնճռոտած կերպարանք: Նա տեսաւ, որ իւր առաջ լաւիտենական լեռների նոր շղթաներ են երկինք բարձրանում և անյալտանում սպիտակ տմպերի մէջ, բայց նորա կեանքի գործը գլուխ էր բերուած: Ծեր որսորդը ծայրեց իւր խռն ջացած ձեռները և պարկեց այն վհի ափին, ուր աշխատել էր իւր ամբողջ կեանքում: Այժմ, վերջապէս, հասել էր նորա հանգըստեան ժամը: Ներքեւ իւր տակ սպիտակ թանձր մշուշը երերւում էր հոգտի վերայ,

մեռնող որսորդի աչքերը տեսան այն դաշտեր, ծառերն և մարգագետինները, ուր նա անց էր կացըել իւր մանկութիւնը: Հեռուից նորա ականջին հասան նորա նախկին թուչունների ճիշերը, և սպարող ամբոխի տղաղակն ու երգերը: Եւ նորան այնպէս թուաց, թէ իւր հին ընկերների ձայներն է լսում և հեռու, հեռու տեսնում է իւր ծնողական տունը, արևի լուսով լուսաւորուած: Եւ արտասուքի խոշոր կաթիլներ գլորուեցան որսորդի աչքերից:

— Ովքեր մեռնում են այնտեղ, ներքեւ, միայնակ չեն մեռնում, — աղաղակեց նա:

Ապա նորից ամեն ինչ սկսեց մշուշով ծածկուել և նա շուռ եկաւ: Ես որոնեցի, — ասաց նա, — ես լամառութեամբ աշխատեցի երկար տարի ներ, բայց չգտայ նորան: Ես չեմ հանգըստացել, չեմ տրանջացել և չտեսայ նորան: Այժմ բոլոր զօրութիւնս գնացել է: Այնտեղ, ուր ես պարկած եմ, նուաղած, ուրիշ մարդիկ կգան, աւելի երիտասարդ և աշխորժ: Նոքա կգան այն հետքերով, որ թողել եմ ես, կբարձրանան այն աստիճաններով, որ ես եմ փորել: Նոքա երբէք չեն իմանալ այն մարդու անունը, որ շինել է ալդ: Նոքա կծաղըն իմ կոպիտ աշխատանքը: Երբ քարեր կը թափուին՝ կանիծեն ինձ: Բայց նոքա

կբարձրանան իմ սանդուխքով, կբարձրանան
իմ աշխատութեան շնորհիւ։ Նոքա կգտնեն
Նորան և իմ օգնութեամբ։ Ոչ մի ժարդ
միայն իւր համար չէ ապրում և ոչ մէկը չէ
մեռնում միայն իւր համար։

Նորա կնճռալի արտեանունքներից ար-
տասուքներ թափուեցան։ Եթէ այդ ժամին
նորա վերայ ամպերի մէջ երեար ծզմս բառու-
թիւնը, նա չէր կարող տեսնել. մահու-
խաւարը ծածկել էր նորա աչքերը։

— Հոգիս լսում է նոցա քալերի ցնծալից
մերձանալը, - ասաց նա, - և նոքա կբարձրա-
նան, նոքա կբարձրանան։

Նա իւր կնճռոտ ձեռքք մօտեցրեց աչքերին։
Եւ ամպսմած երկնքից ինչ-որ ընկաւ և
կամաց կամաց սկսաւ իջնել խաղաղ, անշարժ
օդի մէջ։ Լոփի մնջիկ ընկաւ նա ցած և ա-
նուշիկ պարկեց մեռնող մարդու կըծքի վե-
րայ։ Նա շօշափեց ձեռքով — դա մի փետուր
էր։ Նա մեռաւ, փետուրը ձեռքերում բռնած։

գ. Հրատարակութիւնները

- | | | |
|---|---|----|
| Ա. Յարութիւններն, Հալոց գիրը 1893. | 1 | 50 |
| Եշի, Ա. Թիհրուգեան, Մուխ, 1893 | — | 15 |
| Թանգարէ, Էմաէ, Վէպ թարգմ. Յ. Ալայեանի. | — | 25 |
| Ալրէր Ալնօ, Քրդի լիւռն, 1894 | — | 25 |
| Ճաղարթէգեանց Յ. Հալոց լիզու ա. ա. 1894 | — | 30 |
| Երիմեան Հալլիկ, Փամանակը 1895 | — | 16 |
| Սովորի, Ազմարած Մոնի թ. հ. Յարութիւն 1885 | — | 15 |
| Բակ. (Բարդէն Ժ.) Կիլիկիա 1896. | — | 15 |
| Գևոտացցի, Լինհարդ և Գերտրուդ. 1896 | 1 | 50 |
| Երքսեղեկ ալքեակ. Մուրատեան, Պետրոս | — | 50 |
| Շանչեան պատկերով, 1897 | — | 50 |
| Թ. Ա. Խոհարարուհի, բ. տպ. ճոխացրած | — | 50 |
| — 54. Լումայ, զրական հանդիս 1896—1901 ամեն | — | — |
| մի գիրքը արժէ | 2 | — |
| 3. Գարունեան, Միծաղ, պատկերով, 1899 | 1 | 25 |
| » Արմել, ատամիար. Կատակ. 1901 | — | 50 |
| » Քաղաքավար. վասները, 1901 | — | 75 |
| Ա. Յարութիւններն, Ասեփաննոս Պալատանեան | — | 25 |
| Ն. Էլր-Կարապետեան, Խաչատրուր Սրովեան | — | 60 |
| Ի. Յարութիւններն, Աշակերտի լուշատեարը | — | 30 |
| » Գաղատմաների աշխարհ. | — | 30 |
| Յարութիւններն, Մելիք և սուփ. | — | 20 |
| Մ. Խոկափի, Արացազըր, Թարգմ. Իս. Յարութ. | — | 20 |
| 1901 Ա. Էֆմաննի մի զարգացարձը | — | 60 |
| Եր. Շահաղիզ, Մկրտիչ Էմին | — | 10 |
| Կարալէնկօ, Կոլյ Երամիշչուր թարգմ. Մոշէ Վրդ. | — | 25 |
| Զորբորդ գարու հայ Եկեղեցին. | — | 40 |
| Եր. Շահաղիզ, Հոր Համբիջնանի և իսաչ վանքը | — | 25 |
| Ի. Յարութիւններն, Խմ օրագիրը. | — | 60 |
| Խրիմեան Հալլիկ, Դրախտի Ընտանիք | — | 50 |
| » Սիրաք և Սամուել | — | 25 |
| » Ակրաւ Մհեմ | — | — |
| Դ. Խաչկոնց, Հալոց կըսն, բանաստեղծութիւնը. | — | 60 |
| Ե. Յարութիւններն, Կին վիպազիք, Ե. Սպիրի | — | 15 |
| Ն. Սպանեանց, (թարգմ.) Սկ հացեր. | — | 5 |

Մամուլի տակ

3. Գիւտն Հալոց պատմութիւն, գիրք Ե.
7. » » » գիրք Զ.
8. Երկման Շատրվանի Անտառապետ Ֆրեդերիկ. Թարգ.
- Գիւտ ա. Քահ. Ազանեանի:

ՆՈՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

1. Խոր Խաչիկ, պատմական վ. լ. Պ. Տալեանց
0 1894 — 25
2. Ֆէրիզադէի երգը, Փոքր Ասիայի կեանքից, թղթ.
Յ. Լալալեանց 1894 — 25
3. Ղարիբ մշեցի, պատկեր առձկահայոց ներկայ
կեանքից 1894 — 10
4. Հուքալէլ Տարելը բնական զիտութեանց. ժո-
ղովրդական ընթերցանութեան համար, գերմա-
ներէնից թարգմ. Խ. Յարութինեանց 1894 — 40
5. Վահան Մամիկոնեան, Ճաղարքէզեան Յ. 1894 — 40
6. Սլպեան հովիւ, գերմ. թարգմ. Խ. Յարութի-
նեանց 1895 — 20
7. Հալրենազուրկ, զերմաներէնից թարգմ. Խ. Յա-
րութինեանց 1896 — 50
8. Գիւղական վարժուհի, Զիսմազոլիի, թարգմ. Լ.
Մելիք Աղամիեանի 1897 — 25
9. Հոփման. Զինուար Յակոբ, գերմ. թարգմ. Տիր
Կոստանեան 1897 — 7
10. " Խեանքի գոյրոց, գերմ. թարգմ. Տիր.
Կոստանեանց 1897 — 10
11. Յուղալի գերջին զիշեւը, թարգմ. Արք. Քահ.
Շիխնեանց. 1898 — 7
12. Խ. Յարութինեան, Մալկաց. 1901 — 10
13. Օ. Շրաբնէր, Արսորդ, թարգմ. Գիւտ ա. Քահ.
Աղանեանց. — 10

ԳԻՒՆՆ Է 10 ԿՈՋ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0168843

